ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի ,, Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջն. դպրոց.. ՊՈԱԿ-ի քիմիայի (8 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ) , ինֆորմատիկայի (7 դասաժամ) , ֆիզկուլտուրայի (9 դասաժամ) տեխնոլոգիայի (6 դասաժամ) և ռուսաց լեզվի (13 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում՝ է ըստ ՀՀ ԿԳՍՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում / ՁԵ 1/ , մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/ դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ
- .. Հանրակրթության մասին .. ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /,
- ինքնակենսագրություն / ՁԵ 5 /,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ -ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում/
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջությամբ չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 23-ից մինչև մարտի 9-ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 11-ին՝ ժամը 14:00-ին , ՀՀ Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջն. դպրոցում. հասցեն՝ Արարատի մարզ , գ. Արբաթ , փ.4, շ.48:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 47 24 20 հեռախոսահամարով: